ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Դպրոցական օլիմպիադա – 2024թ.

Աշխարհագրություն – I փուլ

Տևողությունը՝ 120 րոպե

Գնահատման քայլը՝ 0,5 միավոր

Առաջադրանքներ

1. Ինչպիսի՞ աշխարհամակարգ է ջրանցքը…….. ……0,5 միավոր
   1) բնական
   2) հասարակական
   3) բնահասարակական
   4) տնտեսական

2. Բնակչության վերարտադրության առաջին տիպի երկիր է……..... 0,5
   1) Հնդկաստանը
   2) Ճապոնիան
   3) Ինդոնեզիան
   4) Իրանը

3. Ո՞ր միջօրեականն է ավելի երկար.....…….… 0,5
   1) 0° -ը
   2) 90 °-ը
   3) 180 °-ը
   4) բոլորն իրար հավասար են

4. Բնական գազի հանույթով առաջատար երկրներ են.....……...……0,5
   1) Նիդերլանդները և Նորվեգիան
   2) Ֆրանսիան և Գերմանիան
   3) Եգիպտոսը և Հունգարիան
   4) Լեհաստանը և Չեխիան

5. Գետի ակունքի բարձրությունը 2400 մ է, իսկ գետաբերանինը՝ 600 մ:
   Նրա երկարությունը 300 կմ է: Որոշել…….....…2,0
   ա) գետի անկումը
   բ) գետի թեքությունը

6. Երկրի բնակչության թիվը 40 մլն է, քաղաքաբնակների բացարձակ թիվը՝ 16 մլն,
   տարածքի մակերեսը՝ 200 000 կմ²: Որոշել……...…..……2,0
   ա) ուրբանիզացման մակարդակը
   բ) բնակչության միջին խտությունը

7. «Մայրցամաք - կղզի» զույգերից ընտրել ճիշտը.....…….……..0,5
   1) Աֆրիկա – Հրո երկիր
   2) Անտարկտիդա - Թասմանիա
   3) Եվրասիա - Իսլանդիա
   4) Հարավային Ամերիկա – Նյուֆաունդլենդ

8. «Պետություն - մայրաքաղաք» զույգերից ընտրել սխալը…….....…….....…..0,5
   1) Լատվիա - Ռիգա
   2) Ուզբեկստան – Տաշքենդ
   3) Նիկարագուա – Սան Խոսե
   4) Սիրիա - Դամասկոս

9. Պրերիաները ո՞ր մայրցամաքում են.....0,5

1) Հարավային Ամերիկայում
2) Հյուսիսային Ամերիկայում
3) Ավստրալիայում
4) Աֆրիկայում

10. Ատոմային էներգետիկայի գծով առաջատար երկրներ են.....0,5

1) Հայաստանը և Լիտվան
2) Գերմանիան և Իտալիան
3) Ղազախստանը և Եգիպտոսը
4) ԱՄՆ-ը և Ֆրանսիան

11. Ո՞ր պնդումն է սխալ.....0,5

1) Հասարակածային օդային զանգվածները ձևավորվում են ցածր ճնշման գոտում:
2) Արկտիկական օդային զանգվածները ձևավորվում են բարձր ճնշման գոտում:
3) Արևադարձային օդային զանգվածները ձևավորվում են բարձր ճնշման գոտում:
4) Անտարկտիկական օդային զանգվածները ձևավորվում են ցածր ճնշման գոտում:

12. Ո՞ր պնդումն է ճիշտ.....0,5

1) Զարգացող երկրների տրանսպորտային ցանցի խտությունը մեծ է :
2) Համաշխարհային տրանսպորտային բեռնաշրջանառության մեջ առաջատարը երկաթուղային տրանսպորտն է:
3) Ծովային տրանսպորտի բեռնաշրջանառության մեջ առաջատարը Հնդկական օվկիանոսն է:
4) Ավտոմոբիլային տրանսպորտի դերը հատկապես մեծ է կարճ տարածության վրա բեռներ փոխադրելիս:

13. Զբոսաշրջությամբ առավել առաջատար երկրներ են.....0,5

1) Իտալիան և Իսպանիան
2) Ճապոնիան և Չինաստանը
3) ԱՄՆ-ը և Կանադան
4) Սիրիան և Իրանը

14. Սավանաների բնական զոնան հիմնականում ո՞ր տիպի հողերի վրա է տարածված.....0,5

1) սևահողերի
2) դարչնագույն
3) կարմրագորշ
4) անտառային գորշ

15. Ո՞ր շարքում տրված լեռնագագաթներն ունեն հրաբխային ծագում.....0,5

1) Մարութա, Ջիլո, Կապուտջուղ
2) Սիփան, Ծղուկ, Սրմանց
3) Մուրղուզ, Թեժլեռ, Սուկավետ
4) Առնոս, Ուրծ, Գոմշասար

16. Ո՞ր ջրաէլեկտրակայանն է ավելի հզոր.....0,5

1) Շամբի
2) Քանաքեռի
3) Տաթևի
4) Արգելի

17. ՀՀ հյուսիս-արևելքի անտառներում ամենատարածված ծառատեսակն է……..…..0,5

1) վրացական կաղնին
2) բոխին
3) սոճին
4) արևելյան հաճարենին

18. «Հանքավայր - հանքատեսակ» զույգերից ո՞րն է սխալ…….…….……..…..0,5

1) Սոթք - ոսկի
2) Կապուտան - պղնձահիրաքար
3) Սվարանց - երկաթաքար
4) Ախթալա – բազմամետաղ

19. Դուրս գրել այն երկրների համարները, որոնք ելք ունեն Մև ծով…….……...…2,0

1) Թուրքմենստան
2) Վրաստան
3) Հունգարիա
4) Ռումինիա
5) Ուկրաինա
6) Մոլդովա
7) Ալբանիա
8) Թուրքիա

20. Դուրս գրել այն ապարների համարները, որոնք ունեն անօրգանական նստվածքային ծագում…….…….…….....2,0

1) գրանիտ
2) ավազ
3) խճաքար
4) կրաքար
5) կավ
6) մարմար
7) կերակրի աղ
8) պեմզա

21. Ո՞ր լեռնաշղթան է ավելի երիտասարդ…….…….…….....0,5

1) Ուրալյան
2) Տավրոսի
3) Մեծ Ջրբաժան
4) Տյան Շանի

22. Ո՞ր քաղաքն Արմավիրի մարզում չէ…….…….…….……..0,5

1) Մեծամոր
2) Վաղարշապատ
3) Մասիս
4) Արմավիր

23. Ժամային գոտիների վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք սխալ…….…….…….……....1,5

1) Յուրաքանչյուր ժամային գոտու ժամանակը մեկ ժամով առաջ է նախորդ գոտու ժամից:
2) Յուրաքանչյուր ժամային գոտու կենտրոնով անցնող միջօրեականի ժամանակն ընդունված է անվանել գոտիական ժամանակ:
3) Ժամային գոտիները սահմանազատվում են զուգահեռականներով:
4) Մեկ ժամում Երկրի յուրաքանչյուր կետ կատարում է 15° պտույտ:
5) Ամսաթվի փոփոխման գիծն անցնում է զրոյական միջօրեականով և Լա Մանշ նեղուցով անցնող միջօրեականով:
6) Լոնդոնը 1-ին ժամային գոտում է:

24. Լատինական Ամերիկայի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք սխալ……..……..……..……...….1,5

1) Աչքի է ընկնում բնակչության բարձր խտությամբ՝ ավելի քան 100 մարդ/կմ^2:
2) Տարածաշրջանում են գտնվում աշխարհի առավել խոշոր քաղաքներից Մեխիկոն, Սան Պաուլոն, Ռիո դե Ժանեյրոն:
3) Աչքի է ընկնում խառը ռասաների մեծ տարածվածությամբ:
4) Բնակչության ճնշող մեծամասնությունը դավանում է քրիստոնեության բողոքական ուղղությունը:
5) Երկրների մեծ մասում ցածր է ուրբանիզացման մակարդակը:
6) Առավել տարածված լեզուներն են իսպաներենը և պորտուգալերենը:

Առարկայական հանձնաժողովի նախագահ՝ Ա.Թ. Գրիգորյան

Պատասխաններ

Հարց	Պատասխան	Հարց	Պատասխան
1.	3	**12.**	4
2.	2	**13.**	1
3.	4	**14.**	3
4.	1	**15.**	2
5.	ա) 1800 բ) 6 մ/կմ	**16.**	4
6.	ա) 40 % բ) 200 մ/կմ^2	**17.**	4
7.	3	**18.**	2
8.	3	**19.**	2, 4, 5, 8
9.	2	**20.**	2, 3, 5, 7
10.	4	**21.**	2
11.	4	**22.**	3
23.	1. ճիշտ է 4. ճիշտ է 2. ճիշտ է 5. սխալ է 3. սխալ է 6. սխալ է	**24.**	1. սխալ է 4. սխալ է 2. ճիշտ է 5. սխալ է 3. ճիշտ է 6. ճիշտ է